

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 179

Դրքային սրբագործութիւն – Աստուածաշունչը կոչում է բոլորին որը Սուրբ Հոգովը վերածնել են, որը վստահել են Տէր Յիսուս Քրիստոսին, եւ արդար են հռչակել Աստծոյ առջեւ, որպէս սրբեր ու արդէն սրբւած (Ա. Կորնթացիս 6:11): Քրիստոսի կատարած գործով, մենք որոնք հաւատում ենք Նրան «սրբւեցանք» եւ «կատարեալ դարձանք» մէկընդմիջտ (Եբրայեցիս 10:10, 14): Այս է սրբագործութեան առաջին եւ հիմնական իմաստը, որը տեղի է ունենում մեր փրկութեան սկզբումը: Այն մէկ անգամայ արարք է, եւ ամբողջութեամբ Աստծոյ գործն է: Աստուածաբաններ կոչում են այս որպէս դրքային, հռչակագրային, կամ սահմանւած սրբագործութիւն:

Գերբնականօրէն Աստծով աշխարհքից ջոկւած, մենք այժմ պատկանում են Նրան, Իր հետ մի նոր յարաբերութեան մէջ ենք, կտրւած մեղքի իշխանութիւնից եւ նւիրւած Աստծուն. Եւ ուստի սիրում ենք Աստծուն ու Նրա Խօսքը, եւ զօրադրւած ենք սիրել ուղղարարութիւնը եւ ատել մեղքը, եւ ուստի բարի գործերի պտուղը արտադրել:

Յառաջադիմական սրբագործութիւն – Միայն երբ պատշաճօրէն ըմբռնենք սրբագործութեան այս հիմնական իմաստը ապա մենք կարող ենք խօսել սրբագործութեան երկրորդական իմաստի առթիւ՝ որն է ներքին ու բարոյական մաքրութիւնը: Մինչեւ որ Աստուած նախ սրբացնէ մեզ Իր համար, մենք չենք սրբւի մեր նկարագրումը ոչ էլ մեր վարքումը: Ուստի, նրանք որոնք սուրբ են կոչւել նաեւ կոչւում են սուրբ դառնալ (Ա. Պետրոս 1:14-16): Սրբագործութեան երկրորդական առումը հետեւում է (յաջողում է) սրբագործութեան հիմնական առումին՝ եւ աստուածաբանութեան մէջ այն ճանաչւած է որպէս յառաջադիմական սրբագործութիւն:

Փրկութեան կարգում, տրամաբանօրէն, յառաջադիմական սրբագործութիւնը անմիջապէս ու անխուսափելիօրէն հետեւում է վերածնութեան, արդարացման, ու որդեգրութեան: Վերածնութիւնը, արդարացումը, ու որդեգրութիւնը Աստծոյ մէկ անգամայ վայրկեանական արարքներն են: Վերածնութեան մէջ Աստուած կենդանացնում է հոգեւորապէս մեռածին: Արդարացման մէջ Աստուած արդար է հռչակում նրան որը վերածնել է եւ ապաշխարել է ու վստահել է Յիսուս Քրիստոսին: Սրբագործութիւնը սակայն, արդարացման պտուղն է: Այդ հոգեւոր կեանքի շարունակութիւնն է որը Աստուած սկսեց մեր մէջ վերածնութեամբ: Այդ մի յառաջադիմական ընթացք է, որը շարունակում է հաւատացեալի ամբողջ կեանքումը:

Արդարացումը կատարում է անձից դուրս, ուր Աստուած հռչակում է հաւատացեալին որպէս արդար, առանցի որեւէ փոփոխութիւն նրա ներքին նկարագրում (ներքնաշխարհքում): Իսկ վերածնութիւնը ու սրբագործութիւնը տեղի են ունենում անձի մէջը: Վերածնութեան մէջ Աստուած տալիս է նոր կեանք մեղաւորին՝ նւիրելով նրան մի նոր բնութիւն, սիրտ, միտք, հոգի ու կամք. եւ ապա սրբագործութեան մէջ Աստուած ներքնապէս փոխում է անձի նկարագիրը՝ դարձնելով նրան անձամբ եւ աստիճանաբար սուրբ: Վերածնութիւնը, արդարացումը, ու որդեգրութիւնը Աստծոյ գործն են լիովին: Մենք կրատրական ենք, եւ որեւէ կերպով չենք օգնում Աստծուն դրանց մէջ: Դրանք Աստծոյ մենակատար արարքներն են: Իսկ սրբագործութիւնը գործակցական ընթացք է, այդ մի համակատար գործ է ուր Աստուած գործում է մեր մէջ եւ մենք նաեւ գործում ենք: Սրբագործութիւնը պահանջում է մեր հաւատարմութիւնն, ուշադրութիւնն ու ջանքերը (Եբրայեցիս 12:14):

Վերածնութիւնը, արդարացումը, ու որդեգրութիւնը կատարում են Քրիստոնէական կեանքի սկզբին, ու կատարեալ են այս կեանքում, եւ չեն կրկնում: Միւս ձեռքի վրայ, սրբագործութիւնը շարունակում է հաւատացեալի բոլոր կեանքում եւ անկատար է այս կեանքում: Վերածնութիւնը, արդարացումը, ու որդեգրութիւնը լրիւ ու հաւասար են բոլոր Քրիստոնէաներում: Չկան հաւատացեալներ որոնք աւելի վերածնւած են քան թէ ուրիշները, կամ աւելի արդարացած են քան թէ ուրիշները, կամ աւելի սիրւած որդիք են քան թէ ուրիշները: Իսկ սրբագործութեան աստիճանը տարբերում է Քրիստոնէաների մէջ, լինելով աւելի շատ ոմանց կեանքում եւ աւելի պակաս ուրիշների կեանքում եւ այդ կախեալ է հաւատացեալի հաւատքից, աշխատասիրութիւնից ու յարատեւութիւնից:

«Սրբագործութիւնը Աստծոյ ձրի շնորհքի գործն է, որով մենք ամբողջ անձումը նորոգում ենք Աստծոյ պատկերին համեմատ, եւ մեղքին մեռնելու ու ուղղարարութեան ապրելու աւելի ու աւելի կարողութիւնն ենք ստանում» (Ուէստմինստրիի Համառօտ Կրօնագիտութիւն, Հարցում 35): Այս է Քրիստոնէական կեանքի նպատակը: Ա. Յովհաննէս 3:2-3ում մենք ունենք մի սքանչելի խոստում, որ մի օր մենք Քրիստոսին կատարելապէս կերպարանակից կ'լինենք, եւ այդ չի յառաջացնում ծովութիւն կամ անգործութիւն. ընդհակառակը, այդ առաջնորդում եւ մղում է մեզ դէպի անձնական սրբութեան: Այս է այդ ինչ որ մենք ձգտում ենք եւ յուսացած ենք, եւ որը կ'լինի մերը երբ Քրիստոսը վերադառնայ: Այս զարմանալի խոստումը նաեւ հաստատում է որ Աստուած լիովին կ'սրբացնի մեզ, ուր մենք կ'լինենք գործնականում այն ինչ որ հիմա ենք դրքում Աստծոյ առջեւ (Եսայիա 14:24, Եզեկիէլ 36:26-29, Հռովմայեցիս 8:30, Փիլիպպեցիս 1:6): Ուստի, մենք հաստատ համոզւած ենք, որ մենք այժմ սուրբ ենք, նաեւ սրբւում ենք, եւ մի օր կ'լինենք կատարելապէս սուրբ: